ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

  Արայիկ Հարությունյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

  ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

  Ռուսաստանի Դաշնություն (Կազան)
  2019 թվականի օգոստոսի 22-24-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

  ՌԴ լուսավորության նախարար Օլգա Վասիլևա

- **ՆՊԱՏԱԿԸ**

  Մասնակցություն «Վորլդսքիլզ» (“Worldskills Kazan 2019”) առաջնության շրջանակներում կազմակերպվող համաժողովին և նախարարական հանդիպմանը

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

Հայկական 6 հոգանոց պատվիրակությունը «Վորլդսքիլզ Կազան 2019»-ին մասնակցում է խոհարարություն, նորաձևության տեխնոլոգիաներ և ոսկերչություն մասնագիտություններով, որոնց և համաժողովի շրջանակում այցելել եմ, հետևել առաջնության ընթացքին, ոգևորել հայ մասնակիցներին, նաև առանձնազրույց եմ ունեցել «Վորլդսքիլզ»-ի գործող նախագահ Բարթլի Սայմոնի հետ, կարճ հանդիպում՝ նորընտիր նախագահ պարոն Գոյի հետ:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Կազանում հավաքված աշխարհի շուրջ 20 երկրների կրթության և գիտության նախարարների հետ աշխատանքային կարգով քննարկվել են առկա խնդիրների և մարտահրավերիների, ինչպես նաև ձեռքբերումների մասին: Երկու տարին մեկ անգամ անցկացվող «Վորլդսքիլզ»‰ առաջնությանն այս անգամ մասնակցում էին ավելի քան 75 երկրների ներկայացուցիչներ՝ 50-ից ավելի որակավորումներով, որոնց ներկայացրած տաղավարների միջոցով հնարավոր եղավ ծանոթանալ միջազգային չափանիշներով սահմանված հմտությունների հետ: Հնարավորություն ընձեռվեց համեմատել և քննարկել կրթական համակարգերի նորարական բարեփոխումները, մասնագիտությունների և որակավորումների ճկունության հնարավորությունները, կրթական արդյունքների չափման նոր մոտեցումները: Քննարկումների առանցքում միջին մասնագիտական կրթությունն ու դրա զարգացման հեռանկարներն էին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28.08.2019